

Վ Ճ Ի Ռ Ե Ն Վ Ե Ր Զ

Չեռնի ծնօսու դեռ կը խոկար
Ծեր Պիղատոս,
Խորն սրահին դատարանին,
Մտածելով խաչին դրկուած
Խորհրդաւոր մարդու մասին:

Սպիտակ էր լոդիկն անոր,
Պատաճեմքի պէս.
Մակայն բառերն իր շրբներուն
Դաշոյնեներ սուր,
Աստուածային տեսիլներու
Ռսկի աստղէն
Առած հրայրքն իրենց այրող :

Արդա՞ր էր ան թէ մեղաւոր,
Փոյք չէր քնառ
Դատախազին այդ վատշուէր.
Արդարութիւնն իրեն համար
Բառ էր ունայն,
Կեանիքը՝ թատրոն,
Խոկ մարդերը դերասաններ
Դիմակաւոր :

Ո՞վ էր սակայն մարդն այդ տըժգոյն,
Կը մըտմըտար ծեր Պիղատոս,
Աչք թափանցող, սիրու բարախուն,
Կապած շղթան երկինքներու.
Գուցէ անցորդ մը իմաստուն,
Որ կածանէն այս աշխարհին
Կ'երք ար անվերջ,
Տեսիլներով տեսնդացնոր :

Արքայի մը պէս թագազուրկ
Կը կենար լուռ
Զինքն ուրացող խուժանին դէմ,
Յառած աչերն հորիզոնին՝
Վեր մըշուշէն, ժամանակէն
Այս աշխարհին.
Քունքերէն վար՝
Կիշնէր քրտինքն արինախառն:

Յետոյ յիշեց
Աղերսանքը իր կողակից
Գլուխային,
Չունենալու մաս ու բաժին
Արինին մէջն այդ անմեղին:
Գիշերն երազ տեսներ էր ան,
Աստղ մը դալուկ,
Հոգին կարծես
Մահուան զացող անծանօթին,
Երկնքին մէջ կը հեծկլտար,
Աչք մը անհուն
Որ կ'արտասուէր կարծես անձայն
Մեղքին վըրայ մարդոց բոլոր:

Աչքերն անոր ինկան յանկարծ
Իր ձեռքերուն՝
Զոր լուացեր էր ֆիչ առաջ:

Դեռ կը յիշէր բառերն հատ հատ,
Դատապարտեալ այդ թշուառին,
Երկինքներէն կարծես փրբած.
— Ես եմ արմատ եւ ես եմ ծառ,
Արին եւ հուր հոգիներուն,
Զի մարդկային ցեղը ամբողջ
Իմ մարմնիս մէջ կը տառապի,

Սպասելու բառին կախարդ
Զոր երկինքէն ինձ հետ թերի:
Ես ժամանակն երկու մասի
Բաժնել կրցի,
Անցեալն ամբողջ
Խմ արիւնովս լուալէ վերջ:
Այժմ մարդիկ զիտեն այլիւս
Ուրկէ եկան եւ ուր կ'երթան:
Ինձմէ յետոյ դեռ պիտի զան
Բոնապետներ՝
Պղտորելու հոգին մարդոց.
Սակայն սիրոյն մէջն այն մաքուր
Զոր կը քողում իրքի ժառանգ,
Պիտի ջնջուի ամէն չարիք
Ու պատուհաս,
Որովհետեւ փոխանակել
Կրցի ես զինն մարդազնին
Կաքիլներովն իմ արիւնին:
Ճշմարսութիւնն կը դիմանայ
Միայն մահով»:

Դատարանի սրահին մէջ,
Լսեց յանկարծ ծեր Պիղասոս
Մարսինները ֆըշաքաղող
Զայնն փողերու յուղարկաւոր:
Մուր էր արդէն,
Կապոյտին մէջ վէրքի մը պէս,
Լուսինն էր հոն նոր Պասեֆին,
Այնքան նըման
Արիւնակար փշեպսակին:

ԵՊԻՎԱՐԴ